Անահիտ Գևորգյան
Անի Բաղդասարյան
Գոհար Մելիքսեթյան

2 ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ԵՎԹԱԿԱ ՀԱՆՐԱԿՐԹԱՐԱՆ

www.arevik.am

Անահիտ Գևորգյան
Անի Բաղդասարյան
Գոհար Մելիքսեթյան

2
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԻԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան, 2023

ՀՏԴ 373:78(075.3)
ԳՄԴ 85.31g72
Գ 479

Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից

Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ

Գ 479 **Երաժշտություն**: Տասներկուամյա հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք/Անահիտ Գևորգյան, Անի Բաղդասարյան, Գոհար Մելիքսեթյան: Նկարազարդումները՝ Էմմա Իսախանյանի.– Եր.: Արևիկ, 2023.– 124 էջ: Նկ.–

ՀՏԴ 373:78(075.3)
ԳՄԴ 85.31g72

ISBN 978-5-8077-0905-9
ISMN 979-0-69380-365-1

© «Արևիկ» հրատարակչություն, 2023
© Գևորգյան Ա.Մ. և ուրիշներ, 2023
© ՀՀԿԳՄՄՆ, 2023

Բարև՛, փոքրի՛կ բարեկամ:

Դու առաջին դասարանում ծանոթացել ես բազմատեսակ և բազմաթիվ երաժշտական ստեղծագործությունների: Դու երգել ես, քայլել, պարել, պատմել երաժշտական ստեղծագործություններից ստացած տպավորություններիդ մասին: Դու համեմատել ես այդ ստեղծագործությունները մարդկանց բնավորության գծերի, կենդանիների, բնության և քո շրջապատում տեղի ունեցող երևույթների հետ: Իսկ այժմ ժամանակն է այդ տպավորություններն ընդլայնել և խորացնել, համարձակ քայլել երաժշտության զարմանահրաշ և կախարդական աշխարհում:



Ունկնդրիր

Երգիր

Քայլիր

Նվագիր

Կատարիր վարժություն

Դիտիր

Նոտագրիր

Երգիր նոտաներով

Սովորիր

Ստեղծիր

Նկարիր

Խաղ

Հետաքրքիր է իմանալ

Հարցեր

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԳ

ՊԱՐ

ՔԱՅԼԵՐԳ

ՕՊԵՐԱ

ԲԱԼԵՏ

ՍԻՄՖՈՆԻԱ

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ

Խոսք և երաժշտ.՝ Կ. Վարդումյանի

Հայերենը դյութական
Լեզուն է մեր հին,
Հայոց լեզուն հայ ազգի
Գանձն է թանկագին:

Կրկներգ
Մենք խոսում ենք ու պատմում հայերեն,
Մենք երգում ենք, երազում հայերեն:

Մեսրոպյան տառեր,
Ոսկեշող, կենսունակ
Հայոց այբուբեն,
Հայոց այբուբեն:

Դու շատ թանկ ես ու անգին,
Քեզ սիրում ենք մենք,
Առանց քեզ մենք կյանք չունենք,
Մեր թանկ հայերեն:

Կրկներգ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ

Փոքրիկ բարեկամ, երաժշտության աշխարհ համարձակ մուտք գործելու համար դու պետք է ծանոթանաս երաժշտության պարզ ու մատչելի ժանրերին (տեսակներին):

ՔԱՅԼԵՐԳ



ԵՐԳ

ՊԱՐ

ՔԱՅԼԵՐԳ

Պատահե՞լ է, որ լսել ես ինչ-որ երաժշտություն, որի հնչյուն-ների տակ ցանկացել ես զինվորի պես խրոխտ քայլել: Այդպի-սի երաժշտական ստեղծագործությունը **քայլերգ**ն է: Քայլերգը կարող է լինել դանդաղ կամ արագ: Այն միշտ հանդիսավոր է: Քայլերգը նախատեսված է հանդիսավոր արարողությունների ժամանակ հավասար քայլք կատարելու համար. օրինակ՝ տոնա-կան շքերթների կամ թագավորների թագադրման ժամանակ:



Քայլերգերը հաճախ կատարվում են զինվորական շքերթի ժամանակ: **Զինվորական քայլերգ**ը կատարում են փողային և հարվածային նվագարաններով, օրինակ՝ շեփորով և թմբուկով: Քայլերգերը լինում են նաև **մանկական** և **երգ-քայլերգեր**:

ՁԻՆՎՈՐ

Խոսք և երաժշտ.՝
Մ. Սարգսյան-Չինկեզյանի

Զինվոր, զինվոր քաջ,
Դու քայլիր առաջ,
Ծածանիր դրոշը
Հայկական:

2 անգամ

Կրկներգ

Երգերով, քայլերով՝
Համարձակ, անվախ՝
Մեր պապերի տունը
Դու պահիր խաղաղ:

Հայաստան երկրի,
Հայ ժողովրդի
Ու վաղվա կյանքի
Պաշտպանն ես դու:

2 անգամ

Կրկներգ

✓ Ո՞ւմ է նվիրված «Զինվոր» երգը:
✓ Ինչպե՞ս պետք է կատարել «Զինվոր» երգը:

«Զինվոր» երգը կատարի՛ր ձեռքերդ ձախ ու աջ տարուբերելով, ծնկներդ բարձր քայլելով և հստակ ու համաչափ հաշվելով մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս:

Ունկնդրում

Յո. Շտրաուս-Հայր.

«Ռադեցկու քայլերգը»[1]

✓ Ինչ ցանկություն է քո մեջ առաջանում «Ռադեցկու քայլերգն» ունկնդրելիս:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Յոհան Շտրաուսն եմ Ավստրիայից: Քանի որ իմ որդին ունի նույն անունը և նույնպես կոմպոզիտոր է, այդ պատճառով ինձ անվանում են Յոհան Շտրաուս-Հայր, իսկ որդուս, որի հետ անպայման կծանոթանաս, անվանում են Յոհան Շտրաուս-Որդի: Ես ջութակահար եմ և դիրիժոր: Գրել եմ բազմաթիվ քայլերգեր և վալսեր»:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ ամեն տարի Վիեննայում ամանորյա համերգի վերջում կատարում են «Ռադեցկու քայլերգը»: Քայլերգի կատարումն ուղեկցվում է հանդիսատեսի ծափերով:

[1] https://www.youtube.com/watch?v=6UYklo9h3bw

Ունկնդրում

Պ. Չայկովսկի.
«Անագե զինվորիկների քայլերգը»[2]
«Մարդուկ-Ջարդուկ» բալետից

Ինչպիսի՞ն է «Անագե զինվորիկների քայլերգ»-ի երաժշտությունը:

✓ Ի՞նչ քայլերգերի ծանոթացար. տո՛ւր կոմպոզիտորների և քայլերգերի անունները:

Քայլերգի հնչյունների ներքո քայլի՛ր գլուխդ բարձր, վստահ: «Ռադեցկու քայլերգը» և «Անագե զինվորիկների քայլերգը» ունկնդրելիս ամեն քայլի հետ հարվածի՛ր թմբուկին:

«Անագե զինվորիկների քայլերգը» «Մարդուկ-ջարդուկ» բալետից[3]

[2] https://www.youtube.com/watch?v=4s6VTFMdZ8E

[3] https://avatars.dzeninfra.ru/get-zen_doc/175962/pub_5d7d548c78125e00ad8d3dca_5d7d5a19aad4363eae52d152/scale_1200

Ունկնդրում

Կ. Սեն-Սանս.
«Առյուծի քայլերգը»[4]
«Կենդանիների պարահանդեսից»

- ✓ Արդյո՞ք կարելի է ասել որ «Առյուծի քայլերգը» հանդիսավոր է:
- ✓ Արդյո՞ք քայլերգի մեջ «լսվում» են կենդանիների արքայի քայլերը:

Կոմպոզիտորները քայլերգի միջոցով նաև բնութագրել են տարբեր կենդանիների: Օրինակ՝ ֆրանսիացի կոմպոզիտոր Կամիլ Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդեսի» «Առյուծի քայլերգը» լսելիս կարելի է պատկերացնել, թե ինչպես է կենդանիների արքան հանդիսավոր զբոսնում իր թագավորությունում:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ երկրների խորհրդանիշ համարվող օրհներգերը նույնպես քայլերգեր են, ինչպես օրինակ՝ Հայաստանի և Ֆրանսիայի Հանրապետությունների օրհներգերը:

[4] https://www.youtube.com/watch?v=f_Yc8IF83N0

ՓԱՅՏԵ ՁԻՈՒԿ

Խոսք՝ Կոմիտասի
Երաժշտ.՝ ժողովրդական

Տրո՛փ, տրո՛փ, տրո՛փ,
Վազե՛, ձիո՛ւկ, հո՛պ,
Քարեն վեր, դարեն վեր,
Սիրուն ձիուկ, դեպի լեռ,
Տրո՛փ, տրո՛փ, տրո՛փ,
Հո՛պ, հո՛պ, հո՛պ:

Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Գետեն անցիր ափ,
Մի՛ վազեր,
Մի՛ կոտրեր,
Կարմիր ձիուկ,
Իմ ոտներ.
Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Ա՛փ, ա՛փ, ա՛փ:

Պռո՛ւ, պռո՛ւ, պռո՛ւ,
Այժմ կեցիր[1] դու,
Ու արի,
Կեր գարի,
Գիրո՛ւկ ձիուկ
Քաջարի.
Պռո՛ւ, պռո՛ւ, պռո՛ւ,
Դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ:

1. **կեցիր** – մնա

Ձիու դոփյունները վերարտադրիր թմբուկներով, փայտիկներով կամ փայտե գդալներով:

Ունկնդրում
Է. Փաշինյան.
«Հեծյալը»

Քայլերգով կարող է վերարտադրվել նաև ձիու դոփյունը:

Կատարի՛ր վարժություն Փաշինյանի «Հեծյալը» ստեղծագործության ներքո՝ քայլերդ և թռիչքներդ նմանեցնելով ձիու դոփյունի:

Նկարի՛ր ինքդ քեզ՝ քայլերգ կատարելիս:

- ✓ Քեզ ծանոթ ո՞ր կոմպոզիտորներն են բնութագրել կենդանիներին քայլերգով:
- ✓ Ո՞ր նվագարաններով կարելի է վերարտադրել ձիու դոփյունը:

ԵՐԳ

Դու արդեն գիտես, որ **երգ**ը ստեղծում են բանաստեղծը և կոմպոզիտորը: Դեռևս հին ժամանակներից մարդիկ երգել են թե՛ ուրախության, թե՛ տխրության պահերին: Երգերը կատարում է մենակատարը կամ երգչախումբը: Երգի բազմազան տեսակներից են խաղերգը, կատակերգը, հաշվերգը, արդեն քեզ ծանոթ երգ-քայլերգը և այլն:

Կատակերգը ժողովրդական երգ է, որի օգնությամբ ժողովուրդը պատկերում է ուրախ, հումորային իրավիճակներ: Այդպիսի իրավիճակ է արտահայտված «Ով շատ խոսի» կատակերգում: Այն հարց ու պատասխանի ձևով հյուսված, մանուկների սրամտությունը և պատրաստվածությունը փորձող խաղ է: Ով վրիպի կամ կմկմա, պարտվում է:

ՈՎ ՇԱՏ ԽՈՍԻ

Խոսք՝ ժողովրդական
Երաժշտ.՝ Գ. Մելիքսեթյանի

Ով շատ խոսի, շան պոչ ուտի
Ու ջուր խմի,
Լեզուն կողպենք ու բանալին
Հեռու նետենք:

Ինչպես նկատեցիր, այս կատակերգի երաժշտությունն ունի իրար հաջորդող համաչափ զարկեր, որոնք կարող ենք համեմատել քայլերգի զարկերի հետ:

Կատարի՛ր երգը համաչափ քայլքով:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Գեղունի Չթչյանն եմ Հայաստանից: Կոմպոզիտոր եմ և մանկավարժ: Այժմ ապրում եմ Երևանում: Ես շատ եմ սիրում երեխաներին և գրել եմ բազմաթիվ ստեղծագործություններ նրանց համար: Իմ երգերին արդեն ծանոթացել ես մանկապարտեզում: Հիմա կծանոթանաս իմ ստեղծած երգերից ևս մեկին»:

ՄԵՐ ԵՐԳՆ ԱՌԱՋԻՆ

Խոսք՝ Ս. Մուրադյանի
Երաժշտ.՝ Գ. Չթչյանի

Մենք ուրախ, զվարթ
Նստել ենք դասի,
Սովորում ենք մենք
Նոր երգ միասին:

Կրկներգ
Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սոլ,
Երգում ենք նոտաներով:
Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սոլ,
Երգում ենք սիրով:

Երգի դասն այնպես
Ուրախ է անցնում,
Մեր այս նոր երգն է
Գեղեցիկ հնչում:
Կրկներգ

Ինչքան էլ երգեր
Կյանքում սովորենք,
Առաջին երգն այս
Մենք միշտ կհիշենք:
Կրկներգ

«Մեր երգն առաջին» երգի հնչյուններն ունեն կարճ և երկար տևողություններ: Երկար տևողությունները «քայլում» են, իսկ կարճերը՝ «վազում»: Այժմ մենք գրի կառնենք երգի տևողությունը հատուկ նշանի օգնությամբ, որը կոչվում է **նոտա**:

Պայմանավորվենք երկար տևողությամբ նոտան անվանել **«թա»** ♩ :

Կարճ տևողությամբ նոտան կանվանենք **«թի»** ♪ **:**

Ավելի երկար տևողությամբ նոտան անվանենք **«թա-ա»** 𝅗𝅥:





Քանի՞ զինվորիկ ունի **թա** տևողությունը:

Կարճ և երկար տևողությունների հաջորդականությունը կոչվում է **ռիթմ**:

Գրի առնենք «Մեր երգն առաջին» երգի կրկներգի ռիթմը:



Կատարի՛ր երգի ռիթմը ծափերով և վանկային անվանումներով, այնուհետև դափերի և մարակասների ուղեկցությամբ՝ 𝅗𝅥 (թա-ա) տևողությամբ:

- ✓ Ինչպե՞ս է կոչվում քեզ ծանոթ կարճ տևողությունը:
- ✓ Ինչպե՞ս է կոչվում քեզ ծանոթ ավելի երկար տևողությունը:
- ✓ Ինչպե՞ս է կոչվում քեզ ծանոթ ամենաերկար տևողությունը:

Երգելիս դու կարող ես նկատել, որ երաժշտությունն ունի **զարկեր**, որոնք նման են մարդու սրտի բաբախյունին: Երգի զարկերը լինում են ուժեղ արտահայտված և թույլ արտահայտված: Եթե գրի առնենք «Մեր երգն առաջին» երգի զարկերը, ապա դրանք կունենան հետևյալ տեսքը:



Երաժշտական ստեղծագործությունը բաղկացած է հատվածներից, որոնք ամփոփված են երաժշտական ուժեղ զարկերի միջև: Յուրաքանչյուր այդպիսի հատված՝ մի ուժեղ զարկից մինչև հաջորդ ուժեղ զարկը, կոչվում է **տակտ**: Այդ հատվածների՝ տակտերի միջև դնում են ուղղահայաց (վերևից ներքև տարվող) գծիկ՝ **տակտի գիծ**: Քանի այսպիսի գծիկ ունի գրառված երաժշտությունը, այդքան էլ տակտ ունի: Ստեղծագործության ավարտը ցույց տալու համար դրա վերջում տակտի մեկ գծի փոխարեն դնում են տակտի 2 գիծ. դա ստեղծագործության «վերջակետն» է:



Քանի որ այս երգի զարկերը երկուսն են, ապա գրի առ-նելիս սկզբում պետք է գրել 2 թվանշանը: Գրի առնենք «Մեր երգն առաջին» երգի կրկներգի ռիթմը:



«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Կոմիտասն եմ: Մանուկ ժամանակ ծնողներս ինձ Սողոմոն են կոչել, ազգանունս էլ Սողոմոնյան է: Իսկ երբ մեծացա և դարձա հոգևորական, ինձ կոչեցին Կոմիտաս: Դեռևս մանուկ հասակից ես շատ եմ սիրել երգել: Իսկ մեծ հասակում ոչ միայն երգում էի, այլև սկսեցի հավաքել և գրի առնել հայկական ժողովրդական երգեր»:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Կոմիտասը շատ է սիրել մողեսներ և իր աշակերտներին քնքշաբար անվանել մողեսիկներ՝ «սողսողիկներ»: Անգամ մո-ղեսի տեսքով կրծքազարդ ուներ:

Էդուարդ Արծրունյան. «Երգահավաք»[5]

[5] http://am.hayazg.info/images/e/ed/Komitas118.jpg

ՀԻՆԳ ԷԾ ՈՒՆԵՄ

Հայկական ժողովրդական երգ[6]

Հինգ էծ ունեմ ուլերով, իլիլի, դիլիլի,
Կաթ կկթեմ դույլերով, իլիլի, դիլիլի,
Սեր կչափեմ կալ[1] չափով, իլիլի, դիլիլի,
Եղ կհանեմ լվի տկով[2], իլիլի, դիլիլի:



1. **կալ** – ցորենը ծեծելու՝ կալսելու լայն, ընդարձակ վայր
2. **տիկ** – կենդանու կաշվից պատրաստված պարկ

Երգը կատարիր զանգակներով և զանգուլակնե-
րով:

[6] https://www.youtube.com/watch?v=eS4-sIOMGc4

«Հինգ էծ ունեմ» երգի երաժշտությունը պահպանելով՝ ստեղծի՛ր նոր խոսքեր:

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, նոտաներն ապրում են մի տան մեջ, որը կոչվում է **հնգագիծ**, այսինքն՝ հինգ գիծ: Այս գծերը հաշվում են ներքևից վերև, ա՛յ այսպես.



Նոտաների տունը՝ հնգագիծը, բացում են բանալիով, որը կոչվում է **սոլի բանալի**: Կհարցնես, թե ինչո՞ւ սոլի: Որովհետև գրվում է 2-րդ գծից՝ սոլ նոտայի տեղից: Սոլի բանալին գրում են յուրաքանչյուր հնգագծի սկզբում:

Նոտաներն ապրում են ինչպես այս հինգ գծերի վրա, այնպես էլ դրանց միջև: Օրինակ՝ **սոլ**ը գրվում է 2-րդ գծի վրա, **ֆա**ն՝ 1-ին և 2-րդ գծերի միջև, իսկ **մի**ն՝ 1-ին գծի վրա:



Այժմ նոտագրի՛ր հայկական ժողովրդական «Հինգ էծ ու-նեմ» երգը:



Դու նկատեցի՞ր, որ երկու նոտաների տակ դրված է աղեղնաձև նշան, բայց վանկը միայն առաջին նոտայի տակ է գրված: Երբ երկու նոտան երգվում են մեկ վանկով, այդ նոտաները միացվում են աղեղնաձև նշանով, որը կոչվում է **լիգա**:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ սոլի բանալին անվանում են նաև ջու-թակի բանալի, քանի որ ջութակի համար գրված բոլոր ստեղծագործությունների նոտաները գրելիս հնգագիծը սկսում են սոլի բանալիով:



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ովքե՞ր են ստեղծում և կատարում երգը:
2. Երգի ի՞նչ տեսակներ գիտես:
3. Ի՞նչ են ռիթմը և տակտը:
4. Ինչպե՞ս ենք անվանում կարճ, երկար և ավելի երկար տևողության նոտաները վանկային անվանումներով:
5. Ինչո՞ւ է հնգագծի բանալին կոչվում սոլի:
6. Քեզ ծանոթ կոմպոզիտորներից ո՞վ է հավաքել ու գրի առել հայկական ժողովրդական երգեր:
7. Ինչպե՞ս են Կոմիտասին անվանել նրա ծնողները:
8. Տո՛ւր այն հայ կին կոմպոզիտորի անունը, ով երեխաների համար գրել է բազմաթիվ ստեղծագործություններ:

ՊԱՐ

Հին ժամանակներից երեխաներն էլ, մեծահասակներն էլ սիրել են պարել: **Պար**ը արվեստի տեսակ է, որի ժամանակ մարդիկ կատարում են պարային շարժումներ: Պարերը լինում են տարբեր տեսակի՝ ժողովրդական, պարահանդեսային, ժամանակակից և այլն: Ժողովրդական պարերը արտահայտում են տարբեր ժողովուրդների կյանքը, կենցաղը և



մշակույթը: Պարերն ուղեկցվում են ինչպես նվագարանային կատարմամբ, այնպես էլ երգերով, որոնք կատարվում են պարելու հետ միաժամանակ: Այդպիսի պարերը կոչվում են **պարերգ**:

ՄԱՆՐԻԿ ՏԵՐԵՎԻԿ ԾԱՂԻԿ

Հայկական ժողովրդական երգ

Մանրիկ տերևիկ ծաղիկ,
Մանրիկ տերևիկ ծաղիկ,
Մանրիկ տերևիկ ծաղիկ,
Դաշտերը կանաչ խոտիկ:

Դաշտերը կանաչ խոտիկ,
Չորս կողմը անուշ հոտիկ,
Չորս կողմը անուշ հոտիկ,
Էրթանք[1] դաշտերը մոտիկ:

Էրթանք դաշտերը մոտիկ,
Էրթանք քաղենք մենք խոտիկ,
Էրթանք քաղենք մենք ծաղիկ,
Տեսնենք՝ ո՞րն է խորոտիկ[2]:

1. **Էրթանք** – գնանք
2. **խորոտիկ** – գեղեցիկ, սիրունիկ

Կատարի՛ր պարերգը պարային շարժումներով և դափի նվագակցությամբ՝ տակտի ուժեղ մասերում:

Ունկնդրում

«Շուշիկի»[7] մենապար (մեկ մարդու կողմից կատարվող պար)
Մշակումը՝ Կոմիտասի

- ✓ Ինչպիսի՞ պարեր կան:
- ✓ Ինչպիսի՞ն է «Մանրիկ տերևիկ ծաղիկ» պարերգի երաժշտությունը:
- ✓ Ի՞նչ պար է «Շուշիկին»:

Դու արդեն ծանոթ ես Կոմիտասին և գիտես, որ նա հավաքել ու գրի է առել հայկական ժողովրդական երգեր: Կոմիտասը գրի է առել նաև հայկական ժողովրդական պարեր, որոնք մշակել է դաշնամուրի համար:

[7] https://www.youtube.com/watch?v=jHwy6_ZU4YA

Պարահանդեսային պարերը պարել են Եվրոպայում՝ թագավորական պալատներում հանդիսությունների ժամանակ: Այդպիսի պարերից է **վալսը:** Եկ ծանոթանանք վալսերի արքայի հետ:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Յոհան Շտրաուս-Որդին եմ, ավստրիացի կոմպոզիտոր: Դու արդեն ծանոթ ես հայրիկիս հետ և գիտես, թե ինչու են մեզ անվանում Շտրաուս-Հայր և Շտրաուս-Որդի: Ես նույնպես ջութակահար եմ և դիրիժոր: Գրել եմ բազմաթիվ քայլերգեր, պոլկաներ և վալսեր: Ժողովուրդն այնքան սիրեց իմ վալսերը, որ ինձ անվանեց «Վալսերի արքա»»:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Շտրաուս-Հայրը չէր ցանկանում, որ որդին դառնա կոմպոզիտոր, և միայն մայրիկն էր, որ նպաստեց որդու երաժիշտ դառնալուն:

Ունկնդրում

Յո. Շտրաուս-Որդի.

Վալս «Երկնագույն Դանուբի վրա»

Դիտի՛ր «Երկնագույն Դանուբ» մուլտֆիլմը[8]:



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է պարը:
2. Պարերի ինչպիսի՞ տեսակներ գիտես:
3. Ո՞վ է մշակել հայկական ժողովրդական պարեր:
4. Ի՞նչ է պարերգը:
5. Ո՞ւմ են անվանում «Վալսերի արքա»:

«Խաղ-շղթա»: Ուսուցչի հետ կանգնի՛ր շրջանաձև: Ուսուցիչն անվանում է դասի թեման և իր ձեռքի առարկան փոխանցում ձախ կողմի աշակերտին: Այդ աշակերտն անվանում է թեմայի վերաբերյալ որևէ անվանում և առարկան փոխանցում իր ձախ կողմում գտնվող աշակերտին: Ով չի կարողանում անվանել, շրջանից դուրս է գալիս:

[8] https://www.youtube.com/watch?v=3zCc3_GrDoM

ՈՒՐ ԵՆ ՄԵԶ ՏԱՆՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ՈՒ ՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐԵՐԸ

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, դու արդեն ճանաչում ես երաժշտության պարզ տեսակները՝ երգը, պարը և քայլերգը: Այժմ ժամանակն է ծանոթանալու երաժշտական առավել մեծակտավ տեսակներին (ժանրերին): Դրանք են օպերան, բալետը և սիմֆոնիան:

Կարծում ենք՝ դու արդեն եղել ես թատրոնում և գիտես, որ թատրոնում դերասաններն են ցուցադրում ներկայացում: Դե ի՛նչ, ծանոթանանք նաև երաժշտական թատրոնին:

ՕՊԵՐԱ

Օպերան երաժշտական թատրոն է, որի դերակատարները միմյանց հետ հաղորդակցվում են երգելով: Օպերային ներկայացմանը մասնակցում են երգիչները, երգչախումբը և նվագախումբը: Օպերան ստեղծում են բանաստեղծը և կոմպոզիտորը: Օպերաները լինում են հեքիաթային, պատմական, հայրենասիրական և այլն:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն[9]

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ օպերայում լինում են նաև պարային համարներ, որոնց ընթացքում երգիչները հանգստանում են:

[9] https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A5%D6%80:Jerewan-Oper-msu-wlm-2435.jpg

Կոմպոզիտորները ստեղծում են օպերաներ ոչ միայն մեծերի, այլև երեխաների համար: Մանկական օպերաները նախատեսված են երեխաների համար, բայց ո՛չ միշտ են դրանք կատարում երեխաները: Կոմպոզիտոր Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» օպերան ստեղծվել է երեխաների կատարման համար:

«ՉԱՐԻ ՎԵՐՋԸ» ՕՊԵՐԱ



Կար-չկար մի անտառ կար, որտեղ ապրում էին կենդանիներն ու թռչունները, ծաղիկներն ու թիթեռները: Ամեն առավոտ արևի շողերը ջերմացնում էին անտառի բնակիչներին:

Թռչունները երգ էին ասում (ճնճղուկները, կաչաղակը աղավնին, ագռավը), ծաղիկները երգում և պարում էին (մանուշակը, կակաչը, շուշանը, հասմիկը):



Ծառի մի փչակում ապրում էր կկուն իր երեք ձագի հետ: Սակայն անտառում ապրում էր նաև չար և խորամանկ աղվեսը: Նա օգտվում է կկվի միամտությունից: Ժամանակ առ ժամանակ գալիս է մայր կկվի մոտ, պահանջում նրա ձագերին և ուտում: Այս ամենը տեսնում է ագռավը և

որոշում օգնել կկվին: Նա օգնության է կանչում շանը, որն ապրում էր անտառի մոտ գտնվող գյուղում: Նրանք պատժում են աղվեսին և փրկում կկվի վերջին ձագին:



Նկարիր «Չարի վերջը» օպերայի որևէ հերոսի և մեկնաբանիր, թե ինչու ես ընտրել այդ հերոսին:

Դիտիր Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» օպերան:[10]

«Բարև, փոքրիկ բարեկամ, ես Ազատ Մանուկյանն եմ Հայաստանից: Երևանի և Թբիլիսիի հայկական դըպ-րոցներում աշխատել եմ որպես ման-կավարժ և խմբավար: Ես այնքան եմ սիրում երեխաներին, որ իմ ստեղծա-գործությունների մեծ մասը նրանց է նվիրված: Գրել եմ մանկական երգեր և օպերաներ, որոնցից է «Չարի վերջը» ըստ Հովհաննես Թումանյանի համա-նուն հեքիաթ-առակի»:

- ✓ Ո՞վ է ստեղծել «Չարի վերջը» օպերան:
- ✓ Հայ ո՞ր բանաստեղծի ստեղծագործության հի-ման վրա է ստեղծվել «Չարի վերջը» օպերան:
- ✓ Բնութագրիր «Չարի վերջը» օպերայի հերոս-ներին:

[10] https://www.youtube.com/watch?v=lCELgVxDrCI

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՐԳԸ

(«Չարի վերջը» օպերայից)

Խոսք՝ Հ. Թումանյանի
Երաժշտ.՝ Ա. Մանուկյանի[11]

Ղու, ղու, ղու, ա, ղու, ղու,
Նա, նակ, նակ, ա-ղու-նակ: Թը՛ռռ...
Չա, չա, չա, կա-չա-չա,
Ղակ, ղակ, ղակ, կա-չա-ղակ: Թը՛ռռ...

Ծիտ ենք, ծիտ ենք, ծլվլում ենք ծիվ, ծիվ, ծիվ,
Ոստոստում[1] ենք, թռչկոտում ենք տիվ, տիվ, տիվ:
Ա՛յ մեր թևիկ, ա՛յ մեր փետրիկ[2], մենք պիտ՚
դառնանք փոքրիկ ծիտիկ:
Փոքրիկ ծիտ եմ պիծիկ-միծիկ: Թը՛ռռ...

1. **ոստոստել** – ծառի մի ճյուղից մյուսը ցատկել
2. **փետրիկ** – փետուր



«Թռչունների երգը» կատարիր դերերով՝ ստեղծելով թռչունների կերպարներ:

[11] https://www.youtube.com/watch?v=lCELgVxDrCI



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է օպերան:
2. Ովքե՞ր են մասնակցում օպերայի կատարմանը:
3. Ի՞նչ մանկական օպերա գիտես:
4. Ովքե՞ր են Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» օպերայի հե-
   րոսները:

ԲԱԼԵՏ

Բալետը երաժշտական թատրոն է, որտեղ դերակատարները միմյանց հետ հաղորդակցվում են պարելով: Բալետին մասնակցում են պարողները և նվագախումբը: Բալետը ստեղծում են բանաստեղծը, կոմպոզիտորը և պարի բեմադրողը (խորեոգրաֆը): Հայ կոմպոզիտորները ևս ստեղծել են բալետներ: Նրանցից մեկը կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանն է:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Տիգրան Մանսուրյանն եմ: Առաջին անգամ դաշնամուր նվագել եմ 7 տարեկան հասակում Գյումրիում, ապա ուսումս շարունակել Երևանում: Ես գրել եմ բազմաթիվ ստեղծագործություններ: Երեխաների համար գրել եմ «Ձյունե թագուհին» բալետն ըստ Հանս Քրիստիան Անդերսենի համանուն հեքիաթի»:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ հայկական բալետի հիմնադիրը աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանն է:

Ունկնդրում

Տ. Մանսուրյան.

«Ձյունե թագուհու թագավորությունը»

«Ձյունե թագուհին» բալետից

Բալետի գլխավոր հերոսներն են Ձյունե թագուհին, քույր և եղբայր Գերդան և Կայը:

Սառցե թագավորությունում ապրում էր Ձյունե թագուհին: Նա շատ չար էր, քանի որ նրա սիրտը սառույցից էր: Ձյունե թագուհին կախարդանքով դարձնում է Կայի սիրտը սառույց, և միայն համարձակ և հավատարիմ Գերդայի շնորհիվ է կախարդանքը վերանում:Կայի սառցակալած սիրտը՝ ջերմանում, իսկ Ձյունե թագուհին հալչում է:

Ունկնդրում

Տ. Մանսուրյան.
«Մենուետ»
«Ձյունե թագուհին» բալետից

Մենուետը պարահանդեսային պար է, որը պարել են Ֆրանսիայի թագավորի պալատում: Մենուետի քայլերը դանդաղ են և հանդիսավոր:

- ✓ Ինչ պար է մենուետը:
- ✓ Որտեղ են պարել մենուետը:
- ✓ Ինչպիսին է «Ձյունե թագուհին» բալետի «Մենուետ»-ի երաժշտությունը:

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, դու արդեն սովորել ես մի, ֆա, սոլ նոտաները, որոնցից **մի**ն գրվում է 1-ին գծի վրա, **ֆա**ն՝ 1-ին և 2-րդ գծերի միջև, իսկ **սոլ**ը՝ 2-րդ գծի վրա: Եթե գրի առնենք **մի** նոտային նախորդող նոտաները, ապա կտեսնենք, որ աստիճանաբար դեպի ներքև ենք իջնում, այսինքն՝ **մի**ից ցած գտնվող **ռե** նոտան կգրենք 1-ին գծի տակ.

Սակայն նոտաների «տնակ» հնգագծում բոլոր նոտաները չեն տեղավորվում: Այդ իսկ պատճառով օգնության են գալիս օժանդակ գծիկները, որոնք դրվում են հնգագծի ներքևում և վերևում: Այսպես՝ **դո** նոտան գրվում է ներքևի առաջին օժանդակ գծի վրա.



Նոտագրի՛ր վարժությունը և երգի՛ր:



Տրված օրինակում շարունակի՛ր բաց թողնված տակտերը՝ ստեղծելով երաժշտական հատված:





ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է բալետը:
2. Ովքե՞ր են ստեղծում բալետը:
3. Ո՞ր հայ կոմպոզիտորի մանկական բալետին ես ծանոթացել:
4. Ո՞ւմ հեքիաթի հիման վրա է ստեղծվել կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի «Ձյունե թագուհին» մանկական բալետը:
5. Ովքե՞ր են «Ձյունե թագուհին» բալետի հերոսները:
6. Ի՞նչ է ուսուցանում այս բալետը:

ՍԻՄՖՈՆԻԱ

Սիմֆոնիան երաժշտական մեծակտավ ստեղծագործություն է, որը բաղկացած է մեկ կամ մի քանի մասից: Սիմֆոնիան կատարում է **սիմֆոնիկ նվագախումբը**՝ բազմաթիվ երաժիշտներից բաղկացած խումբը: Սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում է **դիրիժորը**:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ,
դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան[12]

[12] https://apo.am/wp-content/uploads/2019/04/IMG_1605.jpg

Տարբեր կոմպոզիտորներ ստեղծել են սիմֆոնիաներ, բայց վերջնականապես սիմֆոնիան ձևավորվել է Յոզեֆ Հայդնի արվեստում, այդ իսկ պատճառով նրան անվանում են «Սիմֆոնիայի հայր»:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Յոզեֆ Հայդնն եմ Ավստրիայից: Ես ծառայել եմ թագավորի պալատում, որտեղ և առաջին անգամ ստեղծել եմ սիմֆոնիկ նվագախումբ, ինքս էլ եղել այդ նվագախմբի դիրիժորը: Թագավորական պալատում կազմակերպվող համերգների համար գրել եմ բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում՝ 100-ից ավելի սիմֆոնիա»:

Ունկնդրում
Յո. Հայդն.
Հատված Օքսֆորդյան սիմֆոնիայից[13]

Խաղ «Շրջան»

Այժմ ունկնդրենք հատված մի սիմֆոնիայից, որտեղ բացի ավանդական նվագարաններից օգտագործվել են նաև մանկական նվագարաններ՝ կկու, շեփոր, թմբուկ, եռանկյունի, ճչանակ: Այդ իսկ պատճառով այն նաև անվանում են «Խաղալիքների սիմֆոնիա»: Քանի որ հավաստի տեղեկություններ չեն պահպանվել, այդ պատճառով որպես այս սիմֆոնիայի հեղինակ նշում են կա՛մ Յոզեֆ Հայդնին, կա՛մ Լեոպոլդ Մոցարտին (հանրաճանաչ կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի հորը):



[13] https://www.youtube.com/watch?v=ZeFxUC2bqTE

Ունկնդրում

Յո. Հայդն.

«Մանկական սիմֆոնիա»[14]

Դիտի՛ր «Հայդնի «Մանկական սիմֆոնիա»» մուլտֆիլմը[15]:

Նոտագրի՛ր «Դան, դան, դանեդան» հայկական ժողովրդական երգը:



ձի խավ մը կէր – ես մի հավ ունեի



«Դան, դան, դանեդան» երգի երաժշտությունը պահպանելով՝ ստեղծի՛ր նոր խոսքեր:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախումբը ստեղծել է կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, ով նաև եղել է այդ նվագախմբի դիրիժորը:

[14] https://www.youtube.com/watch?v=1miohLVZobE

[15] https://www.youtube.com/watch?v=XWRfggAxGDs

ՀԱ՛Ֆ, ՀԱ՛Ֆ

(«Չարի վերջը» օպերայից)[16]

Խոսք՝ Հ. Թումանյանի
Երաժշտ.՝ Ա. Մանուկյանի

Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
Ահա այսպես հաչում եմ ես.
Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
Ու տունն այսպես պահում եմ ես:

Թե գա մեզ մոտ մի հին ծանոթ,
Մոտն եմ վազում, պոչս շարժում,
Բայց թե մի գող չարկամեցող
Ուզի թաքուն մտնի մեր տուն...

Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
Ահա այսպես հաչում եմ ես.
Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
Ահա այսպես պահում եմ ես:
Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ,
Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ:

- ✓ Ա. Մանուկյանի «Չարի վերջը» օպերայում ինչ-պիսի՞ հերոս է շունը:
- ✓ Բնութագրի՛ր շանը:

[16] https://www.youtube.com/watch?v=lCELgVxDrCI

ՁՅՈՒՆ Է, ՁՅՈՒՆ

Խոսք և երաժշտ.՝
Մ. Սարգսյան-Չինկեզյանի

Ձյուն է, ձյուն, ձյուն է, ձյուն՝
Ճերմակ, պսպղուն[1],
Ձյուն է, ձյուն, ձյուն է, ձյուն՝
Մաքուր ու սիրուն:

Կրկներգ
Ձմեռ պապին՝ սահնակին,
Ձյունանուշիկը՝ կողքին,
Եկան ուրախ հանդեսին,
Ծափ, ծափ, ծափ:

Ձա՛ն, տոնենք Նոր տարին
Ուրախ պարերով,
Ներս կանչենք բոլորին
Մեր նոր երգերով:

Կրկներգ

1. **պսպղուն** – փայլուն



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է սիմֆոնիան:
2. Ովքե՞ր են կատարում սիմֆոնիան:
3. Ո՞ւմ են կոչել «Սիմֆոնիայի հայր»:
4. Մանկական ի՞նչ նվագարաններ են օգտագործված «Մանկական սիմֆոնիայում»:
5. Ո՞վ է Հայաստանում ստեղծել առաջին սիմֆոնիկ նվագախումբը:
6. Ո՞վ է եղել Հայաստանի առաջին սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը:

«Խաղ-շղթա»

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, երաժշտության պարզ տեսակները քեզ տարան օպերա, բալետ և սիմֆոնիա, և հայտնվեցիր երաժշտության կախարդական ու անկրկնելի աշխարհում: Մաղթում ենք քեզ հաճելի ճանապարհորդություն:

ԻՆՉՊԵՍ Է ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ)

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, քո առջև բացվում է մի հեքիաթային թագավորություն, որի թագուհին Երաժշտությունն է, իսկ բնակիչները երաժշտական այբուբենն ու երաժշտական արտահայտչամիջոցներն են: Այս կիսամյակում դու կծանոթանաս Թագուհուն և նրա թագավորության բոլոր բնակիչներին:



Յուրաքանչյուր ազգ ունի իր մայրենի լեզուն ու գիրը: Մենք՝ հայերս, գրում ենք հայերեն և հայատառ: Հայկական այբուբենի տառերն են այբ, բեն, գիմ, դա, եչ, զա և այլն: Երեխաները ստեղծել են խաղիկներ, որոնցով ամրապնդել են այբուբենի իրենց իմացությունը:

Ունկնդրում
«Այբ, բեն, գիմ»
(խոսք և երաժշտ.՝ Մ. Յորգանցի[17])

Գրիգոր Խանջյան. «Հայոց այբուբեն»[18]

[17] https://www.youtube.com/watch?v=-im0kiYrBaY

[18] https://pbs.twimg.com/media/FeeXgPRX0Ag9sRR?format=jpg&name=large

Ստեղծի՛ր հայոց այբուբենին նվիրված քառատողով երգ:

Ֆրանչեսկո Մաջիոտտո «Մեսրոպ Մաշտոց»[19]

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ իտալացի նկարիչ Ֆրանչեսկո Մաջիոտտոն 18-րդ դարում նկարել է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցին:

[19] https://www.peopleofar.com/wp-content/uploads/Mesrop-Mashtots-creating-the-Armenian-alphabet-by-Francesco-Maggiotto-1750-1805-723x1024.jpg

Երաժշտությունը նույնպես ունի իր այբուբենը, որի տառերը նոտաներն են: Նոտաները դասավորված են ըստ ձայնի բարձրության:

Ունկնդրում
«Երաժշտական այբուբեն»
(խոսք՝ Ն. Միքայելյանի,
երաժշտ.՝ Ա. Լուսինյանի[20])

✓ Ինչի՞ն է նվիրված «Երաժշտական այբուբեն» երգը:
✓ Ինչպիսի՞ն է «Երաժշտական այբուբեն» երգի երաժշտությունը:

[20] https://www.youtube.com/watch?v=yX78csQK8mU

ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ

Խոսք և երաժշտ.՝ Հր. Օհանյանի

Դո, ռե, մի ֆա, սոլ, լա, սի, դո
Հնչյուններ,
Դո, սի, լա, սոլ, ֆա, մի, ռե, դո,
Ջանիկներ.
Բարձրանում ենք և իջնում ենք
Շարքերով,
Միշտ լցնում եք իմ սիրտը ձեր
Երգերով:
Լա, լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա, լա,

Դո, ռե, մի ֆա, սոլ, լա, սի, դո,
Հնչյուններ,
Դո, սի, լա, սոլ, ֆա, մի, ռե, դո,
Ջանիկներ.
Երբ ձեզ հետ եմ, ես չեմ տխրում
Ոչ մի ժամ,
Ուրախ երգն է միշտ ինձանից
Անբաժան:
Լա, լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա, լա,

Փոքրիկ բարեկամ, քեզ մնում է սովորել 3 նոտա, որ յուրացնես երաժշտական այբուբենն ամբողջությամբ: Երաժշտական այբուբենն անվանում են նաև **հնչյունաշար**: Լ**ա** նոտան գրվում է 2-րդ և 3-րդ գծերի միջև, իսկ **սի**ն՝ 3-րդ տողի վրա: **Սի**ի և դրանից վերև գտնվող նոտաների պոչիկները դրվում են ձախ կողմից և դեպի ներքև:



Նոտաները, այսպիսով, յոթն են՝ **դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի**: **Սի** նոտային հաջորդում է կրկին **դո** նոտան, որն ավելի բարձր է հնչում, քան մեր անցած **դո**ն և գրվում է 3-րդ և 4-րդ գծերի միջև:



Եթե նոտաներով երգես «Հնչյունաշար» երգի առաջին տունը, կտեսնես, որ դրանում օգտագործվել են ներքևի **դո**յից մինչև վերևի **դո**ն եղած նոտաները: 8 նոտաներից բաղկացած այդ հատվածը անվանում են **դո հնչյունաշար:**



Երգիր «Հնչյունաշար» երգի առաջին տունը նոտաներով:





Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ նոտաները կարելի է ցույց տալ ձեռքի նշաններով:

Ձեռքի նշաններով երգիր
«Հնչյունաշար» երգի առաջին տունը:



դո



ռե

մի

ֆա

- ✓ Ինչպես կարելի է ձեռքի նշաններով ցույց տալ դո հնչյունաշարը:
- ✓ Ինչ տարբերություն կա քեզ ծանոթ երկու դո նոտաների միջև:



«Բարև՛, փոքրիկ բարեկամ, ես Ռոբերտ Պետրոսյանն եմ Հայաստանից՝ կոմպոզիտոր, շեփորահար, դիրիժոր: Ստեղծել եմ «Արևիկ» մանկական վոկալ-նվագարանային համույթը: Երեխաների համար գրել եմ բազմաթիվ երգեր: Կարծում եմ՝ դեռ նախադպրոցական տարիքից քեզ ծանոթ է Գ. Բորյանի «Ձի, ձի, փայտե ձի» բանաստեղծությունը, որի համար ես գրեցի երաժշտություն»:

Ունկնդրում

«Արևիկ» մանկական վոկալ-նվագարանային համույթի կատարմամբ հայկական ժողովրդական «Հացթուխ» երգը[21]

- ✓ Ո՞ւմ մասին է հայկական ժողովրդական «Հացթուխ» երգը:
- ✓ Ինչպե՞ս է ժողովրդական երգում ներկայացված հացթուխը:
- ✓ Արդյո՞ք «Հացթուխ» երգը նկարագրում է մեր ժողովրդի կենցաղից մի դրվագ:

[21] https://www.youtube.com/watch?v=wm3SJ_CLtUc

Տրված խոսքերով ստեղծի՛ր երգ.

Գնանք դաշտի հողը վարենք,
Ցորեն ցանենք:

Հասկը հասնի, արևի տակ
Արտը ծփա:

Ցորեն հնձենք, ալյուր աղանք,
Լավաշ թխենք:

ԻՄ ՁԻՆ

Խոսք՝ Գ. Բորյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Ձի, ձի, փայտե ձի,
Մեր դռանը կապեցի,
Սիրուն, սիրուն ներկեցի,
Հետո նրան թամբեցի:
Ով որ ունի այսպես ձի,
Թող գա ինձ հետ նա մրցի:



Փոքրիկ բարեկամ, հայոց գրերով դու արտահայտում ես մտքերդ: Դու ունենում ես նաև երաժշտական մտքեր, որոնք կարող ես արտահայտել երաժշտական այբուբենի օգնությամբ՝ որոշակի ռիթմով խմբավորելով երաժշտական հնչյունները: Այսպես ձևավորվում է **մեղեդին**: Երգի մեղեդին կարելի է երգել խոսքերով և առանց խոսքերի՝ նոտաներով:

Նոտագրիր «Իմ ձին» երգի մեղեդուց հատված:



Ցանկացած երգ կարելի է կատարել չափ տալով, այ-սինքն՝ ձեռքը հավասար շարժելով վերևից ներքև, ապա ներքևից վերև: Օրինակ՝ երկմաս չափն ունի 2 զարկ (մաս). առաջին՝ շեշտված մասում ձեռքն իջնում է ներքև, իսկ երկ-րորդ՝ թույլ մասում՝ բարձրանում:



Երգիր «Իմ ձին» երգի մեղեդուց հատվածը և ձեռքով չափ տուր:

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ: Ես Պյոտր Չայկովսկին եմ Ռուսաստանից: Կոմպոզիտոր եմ, դիրիժոր և մանկավարժ: Երբ երեխա էի, մայրս սովորեցրեց ինձ սիրել դաշնամուրը: Երեխաների համար գրել եմ 3 բալետ հեքիաթների հիման վրա՝ «Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին» և «Մարդուկ-ջարդուկը»: Ստեղծել եմ նաև «Մանկական ալբոմ» և «Տարվա եղանակներ» մանրանվագների շարքերը դաշնամուրի համար: «Տարվա եղանակներ» մանրանվագները ես անվանել եմ 12 ամիսների անուններով: Օրինակ՝ «Մարտ», «Ապրիլ» (որն այժմ ունկնդրելու ես), «Մայիս» և այլն»:

Ունկնդրում

Պ. Չայկովսկի.
«Ապրիլ (ձնծաղիկ)» մանրանվագ[22]
«Տարվա եղանակներ»[23] շարքից

[22] **մանրանվագ** – փոքրիկ երաժշտական ստեղծագործություն
[23] https://www.youtube.com/watch?v=KdwvQbgJbQI

✓ Ինչպիսի՞ն է «Ապրիլ (ձնծաղիկ)» մանրանվագի երաժշտությունը՝ երգայի՞ն, թե՞ պարային:
✓ Ինչպիսի՞ տեսարան եք պատկերացնում մանրանվագն ունկնդրելիս:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Չայկովսկին «Տարվա եղանակներ» շարքի յուրաքանչյուր մանրանվագի սկզբում բանաստեղծական քառատող է գրել ըստ ռուս բանաստեղծների տեքստերի:

Ա՛Խ, ԳԱՐՈ՛ՒՆ Է, ԳԱՐՈ՛ՒՆ Է

Հայկական ժողովրդական երգ

Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն է, գարո՛ւն է,
Սարերի կեսը ձյուն է, գարո՛ւն է:

Սարերը ման եմ եկել, գարո՛ւն է,
Խենթացած[1] տուն եմ եկել, գարո՛ւն է:

Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն է, գարո՛ւն է,
Սարերի կեսը ձյուն է, գարո՛ւն է:

Սարի փեշին ձնծաղիկ, գարո՛ւն է,
Բացել է ճերմակ տոտիկ, գարո՛ւն է:

Մարտիրոս Սարյան. «Արարատը գարնանը»[24]

Ա՜խ, գարուն է, գարուն է, գարուն է,
Սարերի կեսը ձյուն է, գարուն է:

Հալվել է ճերմակ ձնիկ[2], գարուն է,
Վազել է պաղ-պաղ ջրիկ[3], գարուն է:

Ա՜խ, գարուն է, գարուն է, գարուն է,
Սարերի կեսը ձյուն է, գարուն է:

1. **խենթացած** – բուռն զգացումներով, ոգևորված
2. **ճերմակ ձնիկ** – սպիտակ ձյուն
3. **պաղ-պաղ ջրիկ** – սառը ջուր

[24] https://i.ytimg.com/vi/4ZdcpQTnq7c/maxresdefault.jpg

- ✓ Ինչպիսի՞ն է գարունը:
- ✓ Բնության մեջ ի՞նչ է տեղի ունենում գարնանը:



«Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն է» երգը կատարի՛ր հայկական ժողովրդական պարերգի շարժումներով: Ստեղծի՛ր նվագարանային ուղեկցություն:

Ունկնդրում

«Մայրիկը, գիրքը և հայրենիքը»[25]
(խոսք՝ Ս. Մուրադյանի,
երաժշտ.՝ Մ. Վարդազարյանի)

- ✓ Կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանն իր երգում ինչպե՞ս է ներկայացնում մայրիկին, գիրքը և հայրենիքը:
- ✓ Ինչո՞վ են իրար նման մայրիկը, գիրքը և հայրենիքը:

[25] https://www.youtube.com/watch?v=nEdMFrvvCww

ՈՒՐԱԽ ՄԱՅՐԻԿ

Խոսք և երաժշտ.՝
Կ. Վարդումյանի

Ես ունեմ մի մայրիկ թանկագին,
Ժպիտը միշտ դեմքին իմ անգին,
Եվ խաղում է, և զբոսնում ինձ հետ միասին,
Եվ խաղում է, և զբոսնում ինձ հետ միասին...

Կրկներգ
Իմ մայրիկ, մայրիկ,
Գարնան ձնծաղիկ,
Սիրում եմ ես քեզ, դու իմ սիրելի.
Իմ մայրիկ, մայրիկ,
Գարնան ձնծաղիկ,
Սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ,
Դու իմ սիրելի,
Սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ,
Դու իմ սիրելի...

Իմ մայրիկը գիտի շատ երգեր,
Կարդացել է շատ ու շատ գրքեր
Եվ պատմում է շատ լավ հեքիաթներ,
Նույնիսկ լուծում է դժվար խնդիրներ:

Բանավոր: Բոլոր ծաղիկները, բոլոր համբույրները,
Բոլոր մաղթանքները[1] ձեզ,
Մեր սիրելի՛ մայրիկներ, տատիկներ:

Կրկներգ

1. **մաղթանք** – բարի խոսք

Երգը կատարի՛ր բնական նվագարանների ուղեկցությամբ:



Ստեղծի՛ր մեղեդի՝ տրված քառատողի համար.

Մայրս արև է՝ ես մի շող,
Մայրս անձրև է՝ ես մի ցող,
Մայրս այգի է՝ ես մի վարդ,
Երգ եմ գրում նրա համար:

Ինչպե՞ս ես շնորհավորում մայրիկի, տատիկների և ավագ քույրիկների գարնանային տոները:

ՀԵՔԻԱԹ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ

Կար-չկար մի թագավորությունում մի թագուհի կար, անունը՝ Երաժշտություն: Թագուհին շատ լավ էր ղեկավարում երկիրը, և նրան բոլորը սիրում էին: Նրան երբեք ոչ ոք չէր տեսել, սակայն բոլորը լսում էին նրա ձայնը: Երաժշտության ձայնը լսում էին ամենուր՝ փողոցներում, տներում, ժամանցի վայրերում, դպրոցներում և մանկապարտեզներում: Եվ այդ ձայնը շատ գեղեցիկ էր ու տարբեր ժամերի կարող էր լինել տարբեր՝ մեկ ուրախ, մեկ տխուր, մեկ նուրբ, մեկ զրնգուն:



Երգի՛ր հայկական ժողովրդական «Արև, արև» երգը: Կատարի՛ր նաև նոտաներով և ձեռքի նշաններով:



Երգի՛ր «Կա՛թ-կա՛թ» երգը (խոսք և երաժշտ.՝ Ա. Գևորգյանի): Կատա-րի՛ր նաև նոտաներով և ձեռքի նշան-ներով:



Երգիր հայկական ժողովրդական «Նանիկ» երգի կրկներգը: Կատարիր նաև նոտաներով և ձեռքի նշաններով:



Երգիր «Զանգակներ» երգի կրկներգը (խոսք և երաժշտ.՝ Ջ. Լորդ Փիերպոնտի): Կատարիր նաև նոտաներով և ձեռքի նշաններով:



Երգի՛ր «Զինվոր» երգի առաջին տունը (խոսք և երաժշտ.՝ Մ. Սարգսյան-Չինկեզյանի): Կատարի՛ր նաև նոտաներով և ձեռքի նշաններով:





Ունկնդրում

«Ծաղրածուն և ծաղրաձուն»[26]
(խոսք՝ Յու. Սահակյանի,
երաժշտ.՝ Ս. Բաբաթորոսյանի)

- ✓ Ինչ տրամադրություն է արտահայտում Ստեփան Բաբաթորոսյանի «Ծաղրածուն և ծաղրաձուն» երգը:
- ✓ Ինչից է երևում, որ երգը կատակային է:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ բնության ցանկացած երևույթ կարելի է պատկերել երաժշտական հնչյունների միջոցով: Բնությանը նվիրված ստեղծագործությունները տարբեր կոմպոզիտորներ անվանել են «Տարվա եղանակներ»: Օրինակ՝ Անտոնիո Վիվալդին, Յոզեֆ Հայդնը, Պյոտր Չայկովսկին, Գեղունի Չթչյանը և ուրիշներ:

[26] https://www.youtube.com/watch?v=QN1nOO18lpE

Թագուհի Երաժշտության մեջ բաբախում էր սիրտը և ապրում հոգին: Սրտի բաբախը ռիթմն էր, իսկ հոգին՝ մեղեդին:

Փոքրիկ բարեկամ, սովորիր նոտաների մասին հետևյալ երգը, որպեսզի գրի առնենք երգի ռիթմը և մեղեդին:

ԴՈ-ՌԵ-ՄԻ

(«Երաժշտության հնչյուններ» մյուզիքլից)

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի
Երաժշտ.՝ Ռ. Ռոջերսի

Դո, արևն է շողշողում,
Ռե, առվակն է կարկաչում,
Մի, քամին մեղմիկ խաղում,
Ֆա, ծառերն է օրորում:

Սոլ, երկինքը կապուտակ,
Լա, ժպտում է շարունակ,
Սի, սարերի գագաթին
Փայլփլում է սպիտակ ձյունը կրկին:

Կրկներգ
Դո-մի-մի, մի-սոլ-սոլ,
Ռե-ֆա-ֆա, լա-սի-սի:

Սոլ, դո, լա, ֆա,
Մի, դո, ռե,
Սոլ, դո, լա, սի,
Դո, ռե, դո:
Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո, սոլ, դո:



«Դո-ռե-մի» երգի կրկներգի ռիթմն ունի հետևյալ տեսքը.



«Դո, ռե, մի» երգի կրկներգի ռիթմը կատարի՛ր ծափե-րով: Նոտագրի՛ր «Դո, ռե, մի» երգի կրկներգը:



Ինչպես նկատեցիր, կրկներգի վերջում երկու գիծ և երկու կետ են դրված: Այդ նշանը նոտագրության մեջ նշանակում է, որ նշված հատվածը պետք է կատարել 2 անգամ, այսինքն՝ դա **կրկնողության** նշան է:

ՎԱՉԵԻ ՁԻՆ

Խոսք՝ Էդ. Ավագյանի
Երաժշտ.՝ Ս. Նաղդյանի

Վաչեն ունի մի փոքրիկ ձի,
Ման է ածում[1] առանց սանձի[2],
Իսկ ձին ունի ոտքեր փայտի
Եվ շրջում է առանց պայտի[3]:

Կրկներգ
– Ուր էլ որ քշես՝ նա կգնա,
Բայց հենց որ թողնես՝ լուռ կմնա:

Չեմ հասկանում, ի՞նչ ձի է սա,
Ի՞նչ հրաշք է, ի՛նքդ ասա,
Ձին ունենա ոտքեր փայտի,
Շրջի առանց սանձի, պայտի:

Կրկներգ

Զարմանո՞ւմ ես... Մի՛ զարմացիր,
Խաղալիք է, լա՛վ իմացիր.
Ոտքի տեղակ անիվ կլոր,
Քաշես՝ կգա գիլուգլոր:

Կրկներգ

1. **ման է ածում** – ման է տալիս
2. **սանձ** – ձիու բերանը դրվող բարակ ձող
3. **պայտ** – ձիու ոտքերի տակ ամրացվող, վնասվածքներից պաշտպանող մետաղյա թիթեղ

Իր թագավորությունում թագուհի Երաժշտությանը լսում էին նույնիսկ այն ժամանակ, երբ քար լռություն էր տիրում: Այդ լռությունն անվանում են երաժշտական **դադար** կամ **պաուզա**: Երաժշտական դադարները լինում են կարճ ու երկար՝ ճիշտ այնպես, ինչպես նոտաները: Վանկային անվանումով պաուզան կոչում ենք **պա**:



պա
պաուզա

Գրի՛ առ «Վաչեի ձին» երգը, որտեղ կան երաժշտական դադարներ:



Պահպանելով «Վաչեի ձին» երգի մեղեդին, որտեղ կան երաժշտական դադարներ, շարունակի՛ր երգը:



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է երաժշտական այբուբենը:
2. Ի՞նչ է մեղեդին:
3. Ո՞ր գծի վրա է գրվում վերևի դո նոտան:
4. Ինչպե՞ս են ցույց տալիս նոտաները ձեռքի նշաններով:
5. Նոտաների մասին ի՞նչ երգեր գիտես:
6. Ի՞նչ է ռիթմը:
7. Ինչպիսի՞ն է «Դո-ռե-մի» երգը:

«Խաղ-շղթա»

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ

Փոքրիկ բարեկամ, կոմպոզիտորը, երբ ստեղծում է երաժշտություն, դա անում է օգտագործելով **արտահայտչամիջոցներ:**

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտն եմ Ավստրիայից: Ես սկսել եմ ստեղծագործել 3 տարեկանից, իսկ 4 տարեկանից համերգներով շրջել եմ ողջ Եվրոպայում: Ես նվագել եմ կլավեսին և ջութակ: Իմ առաջին ուսուցիչը եղել է հայրս: Մանուկ հասակում ինձ անվանել են «Հրաշամանուկ»՝ բացառիկ տաղանդի համար: Ես գրել եմ բազմաթիվ ստեղծագործություններ քեզ պես փոքրիկների համար»:

Փոքրիկ Մոցարտը հոր և քրոջ հետ համերգի ժամանակ[27]

[27] https://nachinatel.ru/wp-content/uploads/2022/02/mozart02.jpg

Ունկնդրում
Վ.Ա. Մոցարտ.
«Օրորոցային»[28]՝
սիմֆոնիկ նվագախմբի
կատարմամբ

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Եվրոպայով շրջագայելիս փոքրիկ Մոցարտը ելույթ է ունեցել իր հոր և քրոջ հետ. հայրը ջութակ էր նվագում, ինքը՝ կլավեսին, իսկ քույրը երգում էր:

[28] https://www.youtube.com/watch?v=vXRzq_8bJ3c

ՄԻՇՏ ԱՌՈՒՅԳ[1]

Խոսք՝ Լ. Սարգսյանի
Երաժշտ.՝ Է. Միհրանյանի

Դեռ արևը չծագած,
Արթնանում ենք մենք քնից
Ու պաղ[2] ջրով լվացված՝
Դուրս ենք գալիս մենք տնից:

Կրկներգ
Ցատկում[3] վեր, ցատկում վար,
Դեպի աջ և դեպի ձախ,
Մեր կանաչ պուրակում
Վազվզում ենք, թռչկոտում,
Ուրախ երգում, կատակում: 2 անգամ

Ով ուզում է միշտ առողջ,
Ուրախ և զվարթ[4] լինի,
Թող գա նա մեզ հետ այգի
Ու մարզանքներ կատարի:

Կրկներգ

1. **առույգ** – աշխույժ
2. **պաղ** – սառը
3. **ցատկել** – թռվռալ, թռչկոտել
4. **զվարթ** – ուրախ

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, դու լսեցիր ու հասկացար, որ Մոցարտի Օրորոցայինը հնչեց դանդաղ, հանգիստ, իսկ «Միշտ առույգ» երգը՝ արագ, աշխույժ: Երաժշտության կատարման ընթացքը, արագությունը կոչվում է **տեմպ**:

«Միշտ առույգ» երգը կատարիր տեքստին համապատասխան շարժումներով:

Կատարիր ռիթմական վարժություն՝ «Ծաղիկների պարը» (Վ.Ա. Մոցարտի «Դոն Ժուան» օպերայի մի հատվածի՝ «Մենուետի» երաժշտության տակ)՝ ձեռքերով ցույց տալով ծաղիկների թերթիկների նրբությունը:

- ✓ Ինչպիսի՞ն է «Միշտ առույգ» երգի երաժշտությունը:
- ✓ Ինչպիսի՞ն է Մոցարտի «Մենուետ»-ի երաժշտությունը:

Երբ մենք խոսում ենք, մեր ձայնը մե՛կ ուժեղ է, մե՛կ մեղմ: Այդպես էլ երաժշտության մեջ է. այն հնչում է մերթ ուժգին, մերթ մեղմ: Երաժշտության ուժգին կամ մեղմ հնչողությունը կոչվում է **դինամիկա** (ուժգնություն): Նոտաներում երաժշտության ուժգնությունը նշվում է դինամիկայի համառոտագրություններով: Օրինակ՝ **f**-ն նշանակում է **ֆորտե**, այսինքն՝ **ուժեղ**, իսկ **p**-ն նշանակում է **պիանո**, այսինքն՝ **մեղմ**:

Հետաքրքիր է իմանալ: Սովորաբար երգերը կատարելիս երկու անգամ կրկնվող հատվածները՝ կրկնողությունները, առաջին անգամ երգում են ավելի ուժեղ՝ ֆորտե, իսկ երկրորդ անգամ՝ մեղմ՝ պիանո: Կամ հակառակն են անում՝ նախ երգում են մեղմ, ապա՝ ուժեղ:

Երաժշտությունը կարող է կատարվել ոչ միայն արագ կամ դանդաղ, ուժեղ կամ թույլ, այլև սահուն միացող հնչյուններով (լեգատո) կամ անջատ ու կտրուկ (ստակկատո): Կատարման **լեգատո** և **ստակկատո** ձևերը կոչվում են երաժշտության կատարման ձևեր: Լեգատոն նշվում է նոտաների խմբի վերևում կամ ներքևում աղեղնաձև նշանով, իսկ ստակկատոն՝ ամեն կտրուկ նոտայի վերևում կամ ներքևում կետ դնելով:

լեգատո



ստակկատո

Երաժշտության կատարման լեգատո և ստակկատո ձևերն իրար հակադիր են: Ստակկատո կատարումը նման է ցատկապարանով թռիչքների:

Կատարի՛ր «Ցատկապարան» ռիթմական վարժությունը Արամ Խաչատրյանի «Ցատկապարան» մանրանվագի ներքո:

Ֆրանսիացի կոմպոզիտոր Լեո Դելիբը գրեց «Պիցցի-կատո» հատվածը «Սիլվիա» բալետում: **Պիցցիկատոն** նույն ստակկատոն է, բայց այդպես են կոչում այն ստակկատոն, որը կատարում են լարային նվագարաններով՝ լարերը մա-տով կսմթելով:

Ունկնդրում
Լ. Դելիբ.
«Պիցցիկատո»[29]՝
սիմֆոնիկ նվագախմբի կատար-մամբ և մանկական նվագարան-ների՝ զանգակի և եռանկյունու նվագակցությամբ

- ✓ Ինչպե՞ս է կատարվում պիցցիկատոն:
- ✓ Ինչպիսի՞ն են Լեո Դելիբի «Պիցցիկատոյի» առաջին, երկրորդ և երրորդ մասերը:

Կատարի՛ր «Պիցցիկատոն» զանգակներով և եռանկյունիներով այնպես, ինչպես ցույց է տրված տեսանյութում: Ապա նույնը կատարի՛ր մատները նստարանի վրա «վազեցնելով» և ծա՛փ տուր երաժշտության մեջ հանդիպող ♫ ♩ ռիթմը: Միջին մասում ձեռքերը գլխավերևում ազատ տա՛ր աջ ու ձախ, հետո կրկնի՛ր մատների շարժումները և ծափերը:

[1] https://www.youtube.com/watch?v=uIPHZvn1Ccc

Արդեն գիտես, որ երաժշտության կատարման ձևերից մեկն էլ լեգատոն է, որտեղ հնչյունները սահուն միանում են իրար: Լեգատոն հաճախ կարելի է տեսնել դանդաղ, հանդարտ, երգային երաժշտության մեջ, օրինակ՝ օրորոցային երգերում:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Խոսք՝ Լ. Միրիջանյանի
Երաժշտ.՝ Յո. Բրամսի

Մութն ընկավ աշխարհին,
Բերեց քուն ու դադար,
Քնիր դու էլ, անգին,
Մինչև լույս հանգիստ առ:
Ես օրոր կասեմ քեզ,
Որ շուտով դու քնես: | 2 անգամ

Լուսինն իր շողերով
Քեզ քնքուշ կշոյի,
Ծովն անվերջ իր երգով
Քեզ խաղաղ կօրորի:
Ես օրոր կասեմ քեզ,
Որ շուտով դու քնես: | 2 անգամ

Երեխաների ու մեծահասակների ձայները միմյանցից տարբերվում են երանգով: Երեխաների ձայնն ունի մեղմ ու նուրբ երանգ, կանանց ձայնը բարակ է, իսկ տղամարդկանցը՝ թավ: Երաժշտության մեջ մարդկանց ձայների տարբեր երանգներն ունեն հատուկ անուններ. մանկականը՝ **դիսկանտ**, կանացի ձայներից ամենաբարակը՝ **սոպրանո**, տղամարդու ամենաթավ ձայնը՝ **բաս**:

ՓՈՔՐԻԿՆԵՐ

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի
Երաժշտ.՝ էստոնական ժողովրդական

Ուսուցիչ.
Հավաքվե՛ք, փոքրիկներ, սկսում ենք մեր խաղը:

Աշակերտներ.
Մեր շնիկը հաչում է՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ,
Իսկ փիսիկը՝ մլավում՝ մյաո՛ւ, մյաո՛ւ, մյաո՛ւ,
Խոզուկը խռխռում է՝ խը՛ռ–խը՛ռ–խը՛ռ,
Իսկ հորթուկը մայում է՝ մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ:

Ուսուցիչ.
Սիրելի՛ փոքրիկներ, շարունակում ենք խաղը:

Աշակերտներ.
Գորտերը կռկռում են՝ կը՛ռ–կը՛ռ–կը՛ռ,
Բադիկները՝ կռնչում՝ ղա՛–ղա՛–ղա՛,
Ծիտիկը ծլվլում է՝ ծի՛վ–ծի՛վ–ծի՛վ,
Ճանապարհին թռչկոտում՝ թը՛ռ–թը՛ռ–թը՛ռ:

Ուսուցիչ.
Սիրելի՛ փոքրիկներ, ավարտեցինք մեր խաղը:

Կատարի՛ր «Փոքրիկներ» երգը ուսուցչիդ և դասընկերներիդ հետ:

Նկատեցի՞ր, թե ինչպես են տարբերվում երգող ուսուցչի և աշակերտների ձայները: Ձայների երանգների տարբերությունը կոչվում է **տեմբր** կամ **ինչերանգ**:

Նոտագրի՛ր «Փոքրիկներ» երգի մեղեդին: Վանկային անվանումներով և ծափերով կատարի՛ր երգի ռիթմը:





«Փոքրիկներ» երգում յուրաքանչյուր կենդանու ձայները երգելիս կատարի՛ր այդ կենդանուն կամ թռչնին համապատասխան շարժումներ:





Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ *տեմբրը* ֆրանսերեն *timbre* բառից է, որը նշանակում է *զանգակ* կամ *տարբերվող նշան:*

Սովորիր «Կիրակմուտ իրիկունը» հայկական ժողովրդական երգը, որը հնչում է արձագանքի նման: Երգը կատարիր դասընկերներիդ հետ միասին, և թող ձեզնից մեկը լինի մենակատար:

ԿԻՐԱԿՄՈՒՏ[1] ԻՐԻԿՈՒՆԸ

Հայկական ժողովրդական երգ

Մենակատար – Կիրակմուտ
Խմբով – Կիրակմուտ
Մենակատար – իրիկունը
Խմբով – իրիկունը
Մենակատար – յարս եկավ մեր տունը:
Խմբով – յարս եկավ մեր տունը:

1. **կիրակմուտ** – շաբաթ երեկո

Երաժշտական նվագարանները նույնպես տարբեր ձայներ ունեն: Մի նվագարանը հնչում է մեղմ, մյուսը՝ ավելի թավ, երրորդը՝ ավելի զրնգուն և այլն: Նվագարանների հնչողության այս տարբերությունը նույնպես անվանում ենք **հնչերանգ** կամ **տեմբր**, ինչպես մարդկանց ձայները:

Ունկնդրում

Ա. Լյադով.
«Երաժշտական զարդատուփ»՝
նախ դաշնամուրով[30], ապա՝
մանկական նվագարաններով[31]

- ✓ Ինչ կարող ես պատմել «Երաժշտական զարդատուփ» ստեղծագործության մեջ եղած արտահայտչամիջոցների մասին:
- ✓ Ունկնդրման համար առաջարկված այս երկու կատարումներից ո՞րն է առավել հնչեղ:

[30] https://www.youtube.com/watch?v=GLhaQjyUj30
[31] https://www.youtube.com/watch?v=EFd1Vy7AcJ0

Կերպարվեստում երանգներն ավելի տեսանելի են, քանի որ երևում են գույների միջոցով: Դիտի՛ր նկարը և անվանի՛ր, թե գունային որ երանգներն են պատկերված:

ԳՈՒՅՆԵՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Խոսք՝ Հ. Աբրահամյանի
Երաժշտ.՝ Կ. Վարդումյանի

Գույներն ենք մենք վառ, պայծառ,
Բերում ենք խինդ[1] ու ծիծաղ: | 2 անգամ

Ես կարմիրն եմ ոնց ելակ,
Ես՝ դեղինը՝ արեգակ,
Ես կապույտն եմ երկնքի,
Իսկ ես՝ կանաչն անտառի:

Ես էլ ձյուն եմ սպիտակ,
Բերում եմ խաղ ու սահնակ,
Ես էլ գույն եմ սև, մռայլ,
Բերում եմ շանթ[2] ու կայծակ:

Գույներն ենք մենք վառ, պայծառ,
Բերում ենք խինդ ու ծիծաղ: | 2 անգամ

1. **խինդ** – ուրախություն
2. **շանթ** – կայծակի հարված

Երաժշտական հնչյունները բաժանվում են խմբերի: Որոշ հնչյուններ հնչում են թավ, ինչպես առյուծի մռնչոցը: Մյուսներն ունեն միջին բարձրություն, ինչպես այծի մկկոցը: Ուրիշներ էլ հնչում են բարձր, նուրբ, ինչպես թռչունների ծլվլոցը: Հնչյունների խմբերից յուրաքանչյուրը (թավ, միջին, բարձր) կոչվում է **ռեգիստր** կամ **ձայնասահման**: Դրանք լինում են երեք տեսակ՝ ստորին ռեգիստր, միջին ռեգիստր և վերին ռեգիստր:

Ստորին ռեգիստր

Միջին ռեգիստր



Վերին ռեգիստր

Ունկնդրում

Կ. Սեն-Սանս.

«Փիղը»[32], «Ակվարիում»[33]

«Կենդանիների պարահանդես» ստեղծագործությունից





Այսպիսով՝ երաժշտության արտահայտչական միջոցներն են. հնչյունների բարձրություն, հնչյունաշար, երաժշտության կատարման ձևեր, ռիթմ, տեմպ, դինամիկա, տեմբր, ռեգիստր:

[32] https://www.youtube.com/watch?v=AAOwt65vKV4

[33] https://www.youtube.com/watch?v=v8irMn-pInk

«Բարև՛, փոքրի՛կ բարեկամ, ես Կամիլ Սեն-Սանսն եմ Ֆրանսիայից: Կոմպոզիտոր եմ, դիրիժոր: Նվագել եմ դաշնամուր և երգեհոն: Մի անգամ ես մեկնել էի Ավստրիա հանգստի և մի համերգի ժամանակ որոշեցի անակնկալ մատուցել: Այդ համերգի համար գրեցի «Կենդանիների պարահանդես» ստեղծագործությունը որպես կատակ: Երաժշտական հնչյունների միջոցով նկարագրել եմ առյուծին, հավերին և աքաղաղներին, ավանակին, այծքաղին, կրիային, փղին, կենգուրուին, ծովային կենդանիներին, կարապին և այլ կենդանիների: Քեզ արդեն ծանոթ է կենդանիների արքա առյուծի քայլերգը»:



Ունկնդրում

Կ. Սեն-Սանս.

«Կենգուրու»[34]

«Երկարականջ կերպարներ»[35]





✓ Ո՞ր արտահայտչամիջոցների մասին կարող ես խոսել Կամիլ Սեն-Սանսի առյուծին, փղին, ծովային կենդանիներին և իշուկին նկարագրելիս:

Գուշակի՛ր կենդանուն՝ ունկնդրելով տարբեր հատվածներ Կ. Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդեսից»:

Հետաքրքիր է իմանալ: Իսկ դու գիտե՞ս, որ Սեն-Սանսն արգելել է «Կենդանիների պարահանդեսը» կատարել իր կենդանության օրոք: Արգելել է նույնիսկ նոտաները տպագրել, քանի որ այն կարևոր ստեղծագործություն չէր համարում:

[34] https://www.youtube.com/watch?v=jYdbkP6-9_w

[35] https://www.youtube.com/watch?v=1W4oT0MuP8E

ԾԻԱԾԱՆԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՂՈՒՅԹՈՒՆ

Խոսք և երաժշտ.՝ Ա. Աղաբեկյանի

Սպիտակ, մաքուր թղթին ես սիրով,
Ծիածանի պայծառ գույներով,
Նկարեմ կապույտ-կապույտ երկինք,
Երկնքում ապրող փոքրիկ աստղիկ:

2 անգամ

Դեղին մատիտ առնեմ ու սիրով,
Մի տաք արև նկարեմ շուտով,
Իմ նկարած կապույտ երկնքում
Աղավնիներ թող ճախրեն վերում:

2 անգամ

Կրկներգ
Ծիածանագույն իմ թանկ խաղաղություն,
Ծիածանվիր հավերժ երկնակամարում,
Կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, երկնագույն,
Նկարել եմ թղթին ես խաղաղություն:

Կանաչ մատիտով ես նկարեմ,
Անտառում կանաչ թզուկ լինեմ,
Կարմիր մատիտով ծաղիկ անեմ, | 2 անգամ
Ծաղկի վրա կապույտ ցող դնեմ:

Երկնագույն ժպիտներ նկարեմ,
Մարդկանց մտքերը բարի դարձնեմ,
Բարև ասեմ ես մոլորակին, | 2 անգամ
Խաղաղություն, դու շողա կրկին:

Կրկներգ

Երգը կատարի՛ր յուրաքանչյուր ♩ –ին մատներդ ճտտացնելով:

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, այսպիսով դու ծանոթացար երաժշտության արտահայտչական միջոցներին, որոնք քեզ կօգնեն ավելի լավ հասկանալ երաժշտության տրամադրությունը և պատմել երաժշտության բովանդակության մասին:



ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են երաժշտության արտահայտչամիջոցները:
2. Ի՞նչ է տեմպը:
3. Ի՞նչ նշաններով և ինչպիսի՞ անվանումներով են նշում երաժշտության ուժգնությունը:
4. Երաժշտության կատարման ինչպիսի՞ ձևեր գիտես:
5. Ինչպե՞ս են կատարվում լեգատոն և ստակկատոն:
6. Ինչպե՞ս են անվանում երգչական ձայները:
7. Ներկայացրո՛ւ տեմբրը:
8. Ի՞նչ է ռեգիստրը:
9. Արդյո՞ք Կ. Սեն-Սանսի «Կենդանիների դիմակահանդես» ստեղծագործության մեջ հանդիպում են երաժշտական բոլոր արտահայտչամիջոցները:

«Խաղ-շղթա»

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

Երկու սյունակներից ընտրիր ճիշտ զույգերը և գծիկով միացրու իրար:

Ֆորտե	գիծ
Տակտի	դահլիճ
Արագ	նվագախումբ
Սիմֆոնիկ	պիանո
Օպերային	տեմպ

Գծիկով միացրու քեզ ծանոթ կոմպոզիտորների անունները և ազգանունները:

Յոհան	Չայկովսկի
Անտոնիո	Խաչատրյան
Պյոտր	Շտրաուս
Արամ	Սողոմոնյան
Սողոմոն	Վիվալդի

ՍՈՒԴՈԿՈՒ

Ազատ վանդակները լրացրո՛ւ այնպես, որ յուրաքանչյուր հորիզոնական և ուղղահայաց սյունակում լինի մեկական պա, թա-ա, թա և թի տևողություն:

			մ ի
	մ - ա թ		պ ա
	մ թ		
մ - ա թ			թ ի

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ

Գտի՛ր աջ ու ձախ կողմերի համապատասխան բեռնա-տարները և ներկի՛ր նույն գույնով:



ՀԱՎԵԼՎԱԾ

Հայոց այբուբեն

Խոսք և երաժշտ.՝
Կ. Վարդումյանի



Զինվոր

Խոսք և երաժշտ.՝
Մ. Սարգսյան-Զինկեզյանի



Փայտե ձիուկ

Հայկ. ժող. երգ
Մշ.՝ Կոմիտասի



Կատակերգ

Խոսք՝ ժողովրդական

Գ. Մելիքսեթյան



Մեր երգն առաջին

Խոսք՝ Ս. Մուրադյանի — Գ. Չթչյան

Չափավոր

Մենք ու - րախ զը - վարթ նըս - տել ենք դա - սի,

5

սո - վո - ռում ենք մենք նոր երգ մի - ա - սին.

9

դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սոլ, եր - գում ենք նո - տա - նե - ռով,

13

դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սոլ, եր - գում ենք սի - ռով:

Հինգ էծ ունեմ ուլերով

Հայկ. ժող. երգ

Հինգ էծ ու - նեմ ու - լե - ռով, ի - լի - լի, դի - լի - լի

Մանրիկ տերևիկ ծաղիկ

Հայկ. ժող. երգ

Չափավոր, թեթև

Ման - րիկ տե - ռե - վիկ ծա - ղիկ, Ման - րիկ տե - ռե -

4

վիկ ծա - ղիկ, Ման - րիկ տե - ռե - վիկ - ծա - ղիկ,

7

Դաշ - տե - ռը կա - նաչ խո - տիկ:

Թռչունների երգը

Խոսք՝ Հ. Թումանյանի — Ա. Մանուկյան

Չափավոր

p Աղավնին

Ղու, ղու, ղու, ա, ղու, ղու, նակ, նակ, նակ ա - ղու - նակ։ Թըռռ...

6 Կաչաղակը

f

Չա, չա, չա, կա - կա - կա - ղակ, ղակ, չա, կա - չա - ղակ։ Թըռռ...

Արագ

11 Թռչունները

Ծիտ ենք, ծիտ ենք, ծըլ - վը - լում ենք ծիվ, ծիվ, ծիվ,

15

ոս - տոս - տում ենք, թըռչ - կո - տում ենք, տիվ, տիվ, տիվ։

19

Այ մեր թև - իկ, այ մեր փետ - րիկ մենք պիտ դառ - նանք փոք - րիկ ծի - տիկ;

23 gliss.

Փոք - րիկ ծիտ եմ պի - ծիկ - մի - ծիկ։ Թըռռ...

Հաֆ, հաֆ

Խոսք՝ Հ. Թումանյանի — Ա. Մանուկյան

Հանդարտ

Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ, ա - հա այս - պես հա - չում եմ



Ձյուն է, ձյուն

Խոսք և երաժշտ.
Մարի Սարգսյան-Չինկեզյանի



Հնչյունաշար

Խոսք և երաժշտ.՝
Հր. Օհանյանի

Ուրախ, չափավոր

Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո Հըն – չյուն – ներ,

5

Դո, սի, լա, սոլ, ֆա, մի ռե, դո Ջա – նիկ – ներ. Բարձ–րա–նում ենք

10

և իջ – նում ենք Շար – քե – րով, Միշտ լըց – նում եք իմ սիր – տը ձեր

15

Եր – գե – րով: Լա, լա, լա, լա, լա, լա

20

լա, Լա, լա, լա, լա, լա, լա, լա:

Իմ ձին

Խոսք՝ Գ. Բորյանի

Ռ. Պետրոսյան

Չափավոր

Ձի, ձի, փայ – տե ձի, Մեր դը – ռա – նը կա – պե – ցի,

5

Սի – րուն, սի – րուն ներ – կե – ցի, Հե – տո նը – ման թամ – բե – ցի...

9

Ով որ ու – նի այս – պես ձի, Թող գա ինձ հետ նա մըր – ցի:

Ա՛խ, գարու՛ն է, գարու՛ն է

Հայկ. ժող. երգ



Ուրախ մայրիկ

Խոսք և երաժշտ.՝
Կ. Վարդումյանի



Դո ռե մի

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի

Ռ. Ռոջերս

Աշխույժ

Դո, ա – րևն է շող – շո – ղում, Ռե, առ – վակն է կար-կա – չում,

Մի, քա – մին մեղ – միկ խա – ղում, Ֆա, ծա – ռերն է օ – րո – րում:

Սոլ, եր – կին-քը կա-պու – տակ, Լա, ժըպ – տում է շա-րու – նակ,

Սի, սա – ռե – րի գա-գա – թին Փայլ-փը – լում է սպի – տակ ձյու – նը կըր – կին:

Դո մի մի մի սոլ սոլ ռե ֆա ֆա լա սի սի:

Սոլ, դո, լա, ֆա, մի, դո, ռե,

սոլ, դո, լա, սի, դո, ռե, դո:

Դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո, սոլ, դո:

Վաչեի ձին

Խոսք՝ Էդ. Ավագյանի — Ստ. Նաղդյան

Արագ

Վա-չեն ու-նի մի փոք-րիկ ձի, Ման է ա-ծում ա-ռանցսան-ձի,

Իսկ ձին ու-նի ոտ-քեր փայ-տի, Եվ շըր-ջում է ա-ռանցպայ-տի

Ուր էլ որ քը-շես՝ նա կը-գը-նա,

Բայց հենց որ թող-նես՝ լուռ կը-մը-նա:

Միշտ առույգ

Խոսք՝ Լ. Սարգսյանի — Է. Միհրանյան

Արագ

Դեռ ա-րե-վը չը-ծա-գած, Արթ-նա-նում ենք մենք քը-նից,

Ու պաղ ջը-րով լը-վաց-ված, Դուրս ենք գա-լիս մենք տը-նից:

Ցատ-կում վեր, ցատ-կում վար, Դե-պի աջ և դե-պի ձախ,

Մեր կա-նաչ պու-րա-կում Վազ-վը-զում ենք, թըռչ-կո-տում,

Ու-րախ եր-գում, կա-տա-կում: Ու-րախ եր-գում, կա-տա-կում:

Օրորոցային

Հայերեն տեքստը՝ Լ. Միրիջանյանի

Յ. Բրամս

Քնքուշ

Մութնըն – կավ աշ-խար – հին, Բե-ռեց քուն ու դա – դար, Քը-նիր դու էլ, ան –

7

գին, Մին – չև լույս հան – գիստ առ: Ես օ –

10

ռոր կա – սեմ քեզ, Որ շու – տով դու քը – նես: Ես օ –

14

ռոր կա – սեմ քեզ, Որ շու – տով դու քը – նես:

Փոքրիկներ

Էստ. ժող. երգ

Հայերեն տեքստը՝ Ա. Գևորգյանի

Մշ. Տ. Պոլատենկոյի

Աշխույժ, եռանդուն

Ուսուցիչ

Հա – վաք – վե՛ք, փոք – րիկ – ներ, ըս – կը – սում ենք մեր խա – ղը:

5

Հա – վաք – վե՛ք, փոք – րիկ – ներ, ըս – կը – սում ենք մեր խա – ղը:

9

Աշակերտներ

Մեր շը – նի – կը հա – չում է՝ հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ,
Խո – զու – կը խըռ – խը – ռում է՝ խը՛ռ, խը՛ռ, խը՛ռ,

13

Իսկ փի – սի – կը մը – լա – վում՝ մյաու՛, մյաու՛, մյաու՛:
Իսկ հոր – թու – կը բա – ռա – չում՝ մու՛, մու՛, մու՛:

Կիրակմուտ իրիկունը

Հայկ. ժող. երգ

Միայնակ

Կի – ռակ-մուտ ի – ռի-կու-նը

Խմբով

Կի – ռակ-մուտ ի – ռի-կու-նը

5

յա-ղըս ե – կավ մեր տու-նը:

յա-ղըս ե – կավ մեր տու-նը:

Գույներ ենք մենք

Խոսք՝ Հ. Աբրահամյանի

Կ. Վարդումյան

Ուրախ

Գույ-ներն ենք մենք վառ, պայ-ծառ,

9

բե-ռումենքխինդ ու ծի – ծաղ: Ես կար-միրն եմ՝ ոնց ե – լակ,

16

ես՝ դե – ղի – նը՝ ա – ռե – գակ, ես 3 կա-պույտն եմ եր – կըն – քի,

23

իսկ ես կա – նաչն ան – տա – ռի: Ես էլ ծյուն եմ ըս – պի-տակ,





Ծիածանագույն խաղաղություն

Խոսք և երաժշտ.՝
Ա. Աղաբեկյան

















ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց այբուբեն 6

Երաժշտության պարզ և մատչելի ժանրերը 8

Քայլերգ 9

Զինվոր 10

Փայտե ձիուկ 14

Երգ 16

Ով շատ խոսի 17

Մեր երգն առաջին 18

Հինգ էծ ունեմ 25

Պար 29

Մանրիկ տերևիկ ծաղիկ 30

Ուր են մեզ տանում երաժշտության պարզ և մատչելի ժանրերը 34

Օպերա 35

Չարի վարջը օպերան 36

Թռչունների երգը 39

Բալետ 41

Սիմֆոնիա 46

Հաֆ-հաֆ 50

Ձյուն է, ձյուն 51

Ինչպես է ստեղծվում երաժշտությունը
(Երաժշտական այբուբեն) 53
Հնչյունաշար 57
Իմ ձին 64
Ա՛խ, գարո՛ւն է, գարո՛ւն 67
Ուրախ մայրիկ 70

Հեքիաթ Երաժշտություն թագուհու մասին 72
Դո-ռե-մի 79
Վաչեի ձին 81

Երաժշտության արտահայտչամիջոցներ 85
Միշտ առույգ 88
Օրորոցային 92
Փոքրիկներ 94
Կիրակմուտ իրիկունը 96
Գույներ ենք մենք 99
Ծիածանագույն խաղաղություն 104

Երաժշտական ժամանց 107

Հավելված 110

Անահիտ Գևորգյան
Անի Բաղդասարյան
Գոհար Մելիքսեթյան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
2-րդ դասարան

Խմբագիր՝ **Սեդա Ստամբոլցյան**
Էջադրող՝ **Սուզաննա Ղարիբյան**
Նոտագրող՝ **Անի Բաղդասարյանի**
Նկարազարդումները՝ **Էմմա Իսախանյանի**

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 7,75 տպ. մամուլ:

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91
Հեռ.՝ 52-45-61
http: //www.arevik.am
E-mail: arevikbooks@gmail.com

Տպագրված է
«Ստեփանյան Պրինտ» ՍՊԸ
Երևան-33, Գյուլբենկյան 34ա

ԱՐԵՎԻԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ISBN 978-5-8077-0905-9